Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
հատուկ քննչական ծառայության պետի
23.10.2018թ. թիվ 18-Լ հրաման

ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔՆՆԻՉՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության (այսուհետ՝ ՀՔԾ ծառայողների) հատուկ ուսուցման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսի համառոտ նկարագիրը:

1. Ծրագիրը մշակվել է ՀՔԾ պետի 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 18-Լ հրամանի հիման վրա:

2. Ծրագիրը նպատակաուղղված է ՀՔԾ ծառայողների մոտ հրազենի գործադրման հմտությունների ձևավորմանը և դրանց շարունակական կատարելագործմանը:

3. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով:

4. Ուսումնառության ժամաքանակը նախատեսվում է 10 ակադեմիական ժամ: Ուսումնառությունն իրականացվում է մեկ օր ժամկետով:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԸ (ԴԱՍԸՆԹԱՑԸ) ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	SI-S-001-19	Հրազենի գործադման հմտություններ	10

1. SI-S-001-19. Հրազենի գործադրման հմտություններ

Դասընթացը պայմանավորված է ՀՔԾ ծառայողների մոտ հրազենի գործադրման հմտություններ ձևավորելու և դրանք կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է հրազեն գործադրելու, պահելու, տեղափոխելու անվտանգության կանոնները, հրազենային վնասվածքներ ստացած անձանց առաջին բժշկական օգնության հիմունքները, ինչպես նաև հրազենի կիրառման գործնական պարապմունքներ: